ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Վարդանյան,

Առաջնորդվելով Սահմանադրության 195-րդ հոդվածի 2-4-րդ մասերով, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 134-րդ և 145-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության 30.09.2022թ.-ի որոշմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոնում թեկնածու է առաջադրվել Վահագն Միսակի Հովակիմյանը:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից թեկնածուին իրավասու է ներկայացնել պատգամավոր Վլադիմիր Վարդանյանը:

Ազգային ժողովի աշխատակարգի 101-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կից ներկայացվում են.

1. թեկնածուի առաջադրման վերաբերյալ խմբակցության 30.09.2022թ.-ի որոշումը,
2. թեկնածուի նույնականացման քարտի պատճենը,
3. թեկնածուի բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթերի պատճենը (բակալավրի աստիճան շնորհելու վերաբերյալ դիպլոմ N 323287),
4. թեկնածուի կենսագրությունը,
5. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոնում ընտրվելու համար թեկնածուի՝ 30.09.2022թ.-ի գրավոր համաձայնությունը,
6. ՀՀ ոստիկանության ինֆորացիոն կենտրոնի 22.09.2022թ.-ի 23/7-3500 տեղեկանքը:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

03.10.2022թ.

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջնորդվելով Սահմանադրության 195-րդ հոդվածի 2-4-րդ մասերով, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ, 134-րդ և 145-րդ հոդվածներով՝ խմբակցությունը որոշեց.

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոնում թեկնածու առաջադրել Վահագն Միսակի Հովակիմյանին:

2. «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից թեկնածուին իրավասու է ներկայացնել պատգամավոր Վլադիմիր Վարդանյանը:

3.Խմբակցության որոշումը, ինչպես նաև Սահմանադրությամբ և օրենքով սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողով:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

30.09.2022թ.

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Երևանի Մովսես Խորենացու
անվ. համալսարան

ԴԻՊԼՈՄ

AB № 323287

ՊԵՏԱԿԱՆ ԱՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021թվականի
մայիսի 31-ի որոշմամբ
Վահագն Մրուայի Հովակիմյանին
ՇՆՈՐՀՎԱԾ է
իրավագիտության
ԲԱԿԱԼԱՎՐԻ
ՈՍՏԻՃԱՆ
«Իրավագիտություն»

ՈՒՍՄՆԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

Պետական ավարտական
հանձնաժողովի նախագահ

Ստորագրություն

18 հուլիսի 2021 թ. ք. Երևան Գրանցման № 3630

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

Ереванский университет им. Моисея Хоренаци

ДИПЛОМ

AB № 323287

РЕШЕНИЕМ ГОСУДАРСТВЕННОЙ ЭКЗАМЕНАЦИОННОЙ КОМИССИИ
от 31 мая 2021 года
Овакимяну Ваагну Мкаковичу
ПРИСВОЕНА СТЕПЕНЬ БАКАЛАВРА
правоведения
по специальности
«Юриспруденция»

Председатель государственной экзаменационной комиссии

Подпись

08 июля 2021 г. Ереван Регистрационный № 3630

REPUBLIC OF ARMENIA

Yerevan University of Movses Khorenatsi

DIPLOMA

AB № 323287

BY THE RESOLUTION OF THE STATE EXAMINATION COMMISSION OF
31 May 2021
Vahagn Hovakimyan
HAS BEEN AWARDED THE BACHELOR'S DEGREE
in Law
IN THE FIELD OF
"Jurisprudence."

Chairman of the State Examination Commission

Signature

08 July 2021 Yerevan Registration № 3630

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԱԳՆ ՄԻՍԱԿԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Ծնվել է 1974թ. հունիսի 30-ին Երեւանում:
1991 թվականին ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 2 դպրոցը

1991-1993 թվականներին սովորել է ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետում:

1993-1995թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

1996-2000թթ. Սովորել է ԵՊՀ փիլիսոփայության, սոցիոլոգիայի, հոգեբանության եւ քաղաքագիտության ֆակուլտետում:

2021 թվականին ավարտել է Խորենացու անվան համալսարանի իրավաբանության ֆակուլտետի հեռակա բաժինը:

աշխատանքային գործունեություն

1998-ից 1999 թվականը աշխատել է «Օրագիր» օրաթերթում, որպես լրագրող:

1999-ից 2012 թվականը աշխատել է «Հայկական ժամանակ» օրաթերթում որպես լրագրող:

2012-ից 2013 թվականը հանդիսացել է «Դարեսկիզբ» ՍՊԸ տնօրեն: Զուգահեռ զբաղեցրել է նաև «Մեր տպարանը» ՍՊԸ փոխտնօրենի պաշտոնը:

2012-ից 2015 թվականներին ՀՀ ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանի օգնական:

2013-ից 2014 թվականին աշխատել է «Panorama.am» կայքում որպես քաղաքական մեկնաբան: 2014-ից 2016 թվականին աշխատել է «Ժողովուրդ» օրաթերթում, որպես փոխխմբագիր:

2017-ից 2019 թվականին հանդիսացել է ՀՀ ԱԺ «Ելք» խմբակցության փորձագետ:
2018թ. սեպտեմբերի 23-ին ընտրվել է Երեւանի ավագանու անդամ, 2018թ. հոկտեմբերի 17-ին հրաժարական է ներկայացրել:
2019-ից 2021 թվականը ՀՀ ԱԺ պատգամավոր «Իմ քայլը» խմբակցությունից, ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ:

2021-ից ՀՀ ԱԺ պատգամավոր, ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

30.09.2022թ.

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Վահագն Միսակի Հովակիմյանս, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 4.1-ին մասի և Ազգային ժողովի աշխատակարգի 101-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ տալիս եմ իմ համաձայնությունը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոնում ընտրվելու վերաբերյալ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՎԱՀԱԳՆ ՄԻՍԱԿԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

30.09.2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ

375025, ք. Երևան, Նալբանդյան փ. 130 ☏ 596-975, 560-962, 587-139

23/7-3500 № 22 09 22

Ձեր № _____

Տեղեկանք

Տրվում է Վահագն Միսակի Հովակիմյանին, ծնված՝ 30.06.1974թ., (նույնականացման քարտի համար՝
կողմից), առ այն, որ նրա դատվածության և հետախուզման մեջ գտնվելու վերաբերյալ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում տեղեկատվություն առկա չէ:

Տեղեկանքը տրվում է ներկայացնել ըստ պահանջվող վայրի:

Պետ,
ոստիկանության գնդապետ **Ա. Անտոնյան**

«22» 09 2022թ.